

## ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՂՔ ԳԱՎԱՌԻ ՄԻ ՔԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ՏՆՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Պատմական Բաղքը Մեծ Հայքի Սյունիք աշխարհի բաղադրական անցքերով հարուստ և պատմա-աշխարհագրական իմաստով համեմատաբար քիչ ուսումնասիրված գավառներից է, որի բնակավայրերի տեղորոշման հարցը կարևոր նշանակություն ունի տվյալ շրջանի պատմության համար:

Բաղքի տարածքում գտնվող բերդերի, եկեղեցիների, գյուղատեղերի զգալի մասի հին անունները չեն պահպանվել, կամ պահպանվել են աղավաղված և վերանվանված ձևով: Դա հիմնականում բացատրվում է գավառի բնակչության էթնիկական կազմում ժամանակի ընթացքում կատարված տեղաշարժերով: Բարեբախտաբար, Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում, ի վիճակում գավառների բնակավայրերի, հիշատակվում են նաև Բաղքին<sup>1</sup>, որոնց համեմատությունը ժամանակակից տեղանունների հետ հնարավորություն է ընձեռում որոշ պարզություն մտցնել այդ հարցում:

1974 թ. ամռանը տեղագրական ուսումնասիրության ենթարկելով Ղափանի շրջանի այն հատվածը, որը մտնում էր պատմական Բաղք գավառի մեջ և նկատի ունենալով վերահիշյալ «գյուղացուցակի» բնակավայրերի հաջորդականությունը, փորձել ենք ճշտել որոշ բնակավայրերի տեղագրությունը<sup>2</sup>:

Եղենքն.— Մեզ հասած «գյուղացուցակի» տարբեր ձևագրերում հիշյալ տեղանունը հանդիպում է Եղենգն<sup>3</sup>, Եղինգն<sup>4</sup>, Եղենգն<sup>5</sup>, Ե-

ղինկ<sup>6</sup> ընթերցումներով: Հայ մատենագրության մեջ վկայված է Եղէգս ձևով (ս... տան և գեղէգս Գեօղ ի Բաղք գաւառի...»<sup>7</sup>), իսկ մեկ այլ դեպքում (հիշատակարանների տվյալների հիման վրա)<sup>8</sup> Եղենկեան<sup>8</sup>, Եղինկեան<sup>9</sup>, Եղինգեան<sup>10</sup> օրինակներով: Այս գյուղը, որը մտնում էր Բաղք (Լենն) գավառի մեջ<sup>11</sup>, Տաթևի վանքին է նվիրաբերվել 906 թ. Կաթողիկե եկեղեցու և Պատրիարքարանի կողմից սյան կառուցման ավարտից հետո, նավակատիքի ժամանակ<sup>12</sup>:

Տեղանունը ծանոթ է եղել Ղ. Ալիշանին<sup>13</sup>, թեև հիշյալ բնակավայրի տեղորոշմանը նա չի անդադարձել: Ղափանի շրջանի Սևաբար գյուղի բնակիչների վկայությամբ հնում Եղինկ է կոչվել իս Եղել հարևան Շարաղին գյուղը: Այդ տեղեկությունը հաստատվում է նաև 1831 թ. մարդահամարի ժամանակ Ջանգեզուրի բնակավայրերի կամերալ ցուցակագրման տվյալներով, որտեղ Ղափանի շրջանում նշված է «Շարաղին Եկինք» բնակավայրը<sup>14</sup>, որը հավանաբար պետք է լինի Շարաղին-Եղինկ, քանի որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հրատարակված քարտեզներից մեկում այն նշված է որպես Шабалин-Егник<sup>15</sup>: Ըստ երեւոյթին «Եկինք» ձևը ռուսերենից հայերեն կա-

(Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե յ ա ն, Պատմութիւն նահանգին Սիսական, Մոսկվա, 1861, էջ 376):

6 Մատ., ձեռ. № 6271, էջ 338բ:

7 Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե յ ա ն, էջ 229:

8 «Հայերեն ձևագրերի ժե դարի հիշատակարաններ (1601—1620 թթ.)», կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, հատ. Ա, Երեւան, 1974, էջ 483:

9 Նույն տեղում, էջ 484:

10 Նույն տեղում, էջ 543:

11 Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե յ ա ն, էջ 518:

12 Նույն տեղում, էջ 229:

13 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 277, 283:

14 Խ. Ա. Ավետիսյան, Ջանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում (1920—1960), Երևան, 1963, էջ 86: Նույն ընթերցումը հանդիպում է վիճակագրական մեկ այլ ուսումնասիրության մեջ (տե՛ս Չ. Կոռկոտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931), Երևան, 1932, էջ 60:

15 Карта ССР Армении, Ростов-на-Дону, 1926.

1 Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե յ ա ն, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 518—519:

2 Տեղաբնական ուսումնասիրությունների ընթացքում մեզ սիրով օգնել և աջակցել են Ղափանի շրջանի բնակիչներ Ե. Մարտիրոսյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Ժ. Կարապետյանը, Ա. Առաքելյանը, Ս. Հակոբյանը, որոնց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

3 Մատոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ Մատ.), ձեռ. № 2924, էջ 151ր և ձեռ. № 2868, էջ 129ա:

4 Մատ., ձեռ. № 2698, էջ 176բ և ձեռ. № 7503, էջ 227ա:

5 Մատ., ձեռ. № 2869, էջ 222բ, ձեռ. № 6546, էջ 219բ, ձեռ. № 5501, էջ 343, ձեռ. № 6520, էջ 140բ: Եղենգն ձևը հանդիպում է նաև «Գյուղացուցակի» տպագիր օրինակներից մեկում



տարած սխալ տառադարձության հետևանք է:

**ՀԻՆԵՆԱՅ ԶՈՐ.**—Հանդիպում են նաև տեղանվան Հինեայ ձոր<sup>16</sup>, Հինեսս ձոր<sup>17</sup> ընթերցումները: «Գյուղացուցակից» բացի, որտեղ այս գյուղը մտնում էր Բաղթ (ԱՏՆՆ) գավառի մեջ<sup>18</sup>, որի ղ վկայություններ չունենք: «Գյուղացուցակում» այս բնակավայրը դրված է Խոտանան<sup>19</sup>, Եղէնգն, Նորաշինիկ, Նորաշինիկ մյուս գյուղերից հետո: Այս բնակավայրերը, բացառությամբ Երկու Նորաշինիկներից մեկի, այժմ գտնվում են Ղափանի շրջանում, որոնց դիրքից Լինելով Հինեայ ձորը պետք է փնտրել նրանց շրջակայքում: Ուշադրության է արժանի այն փաստը, որ Շաբադին (Եղէնգն) և Սևաբար գյուղերի միջև կա մի հին գյուղատեղ, որը Սևաբար գյուղի բնակիչներին հայտնի է Հյունին արտանունով: Մեր կարծիքով, այն պետք է լինի պատմական Հինեայ ձոր գյուղը: Գյուղատեղի Եկեղեցին առ այսօր կանգուն է: Նրա ներսում, մոտավորապես հատակի մեջտեղում ընկած բարերից մեկի վրա փորագրված է արձանագրություն և խաչ: Քարի մաշված լինելու պատճառով արձանագրության մի բանի տառն է միայն ընթերցվում: Եկեղեցու շուրջը գտնվող տապանաբարերից միայն մեկն է կրում արձանագրություն:

**ՏԱՆՆ.**— «Գյուղացուցակի» ձեռագրերից մեկում գրված է Դախն<sup>20</sup>: Այս բնակավայրը մտնում էր «Միւս Բաղթ» կամ Քաշունիք գավառի մեջ<sup>21</sup>: Դրավոր աղբյուրներում նրա մասին այլ տեղեկություններ չկան: Տախն անու-

նով հին բնակատեղ գոյություն ունի Ղափանի շրջանի Դավիթ Բեկ գյուղից մոտ 2 կիլոմետր հարավ-արևելք, մի բլրի վրա: Այստեղ կիսավեր վիճակում հասարակ բարերից կառուցված մի փոքրիկ Եկեղեցի կա, որի շուրջը գտնվող տապանաբարերը համարյա ամբողջությամբ թաղված են հողի տակ: Եկեղեցու հարավային պատի մոտ կա մի գեղեցիկ բանդակադարդ խաչքար: Բնակատեղին ամբողջովին ծածկված է ծառերով ու թփերով:

**ԿԼԻՄԵՆ.**— Հանդիպում է նաև Կոմէն ձևը<sup>22</sup>, Այս բնակավայրը հիշատակվում է Քաշունիք գավառի գյուղերի թվում<sup>23</sup>: Առանձնապես հետաքրքրություն են ներկայացնում Բարկուշատ (իմա՝ հին Քաշունիք) գավառի բնակավայրերի թվում հիշատակվող «Կոմէն» և «Ներքի Կոմէն» գյուղերը<sup>24</sup>, որոնք հավանաբար առաջացել են միևնույն Կոմեն գյուղի ընդարձակումից:

Ղափանի շրջանում Կոմեն անունով գոյություն ունի միայն մեկ գյուղատեղ, որը գտնվում է Արծվանիկ գյուղից մոտավորապես 2 կմ արևելք, համանուն ձորակում: Կոմենի գերեզմանոցում եղած տապանաբարերից միայն մեկի վրա կա արձանագրություն, սակայն քարի մաշված լինելու պատճառով հնարավոր է ընթերցել միայն թվականը ՌՃԾ (1701): Մյուս տապանաբարերը համարյա ամբողջովին ծածկված են հողի տակ: Հիշյալ գերեզմանոցում կա նաև խոյակերպ մի տապանաբար, որի զուխը կոտրված է և ընկած մոտը:

Ա. ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ

## ТЕРМИН (É)ŠINAPŠI В ХЕТТСКИХ КЛИНОПИСНЫХ ТЕКСТАХ

Перевод термина (É)šinapši — синапси в научной литературе является спорным. Э. Ларош считает его аналогичным хеттскому *hišammar* и соответственно переводит как «портал к храму»<sup>1</sup>, Г. Оттен переводит

синапси как «дом из кедра»<sup>2</sup>, основываясь на фрагменте дубликата, в котором взамен *LÚ.MEŠ šinapši jaš* основного текста употреблено *LÚ.MEŠ GIŠ ERIN-AŠA*<sup>3</sup>.

По общему мнению специалистов, термин (É)šinapši хурритского происхождения, где корень — *šinar*, суффикс — *ši*. Несомненно и то, что *šinapši* это здание, о чем говорит детерминатив É. В одном из текстов *šinapši* встречается с детерминативом *GIŠ*<sup>4</sup>.

<sup>1</sup> E. Laroche, *Etudes hourrites*, *Revue d'Assyriologie et d'Archeologie orientale*, Paris, 1960, 54, № 4, стр. 197.

<sup>2</sup> H. Otten, *Hethitische Totenrituale*, Berlin, 1958, стр. 145.

<sup>3</sup> Там же, стр. 96.

<sup>4</sup> *Keilschrifturkunden aus Boghazköi*<sup>4</sup>, Berlin, VI, 45, I, 62—63=46, II, 27—28 (в дальнейшем KUB).

<sup>16</sup> *Մատ., ձեռ. № 5501, էջ 343:*

<sup>17</sup> *Մատ., ձեռ. № 2858, էջ 129ա:*

<sup>18</sup> *Ստեփանոս Օրբելյան, էջ 518:*

<sup>19</sup> Ղափանի շրջանում գոյություն ունեն վերին և ներքին Խոտանան գյուղեր: «Գյուղացուցակի» մեջ մտնում էր վերին Խոտանանը:

<sup>20</sup> *Մատ., ձեռ. № 6271, էջ 339ա:* Սույն ձեռագրի տպագիր օրինակում սխալմամբ նշված է Դուխն: Ա. Արքաշատյան, *Փամանակագրություն, Ստեփանոսի Օրբելյանի, Երևան, 1942, էջ 42:*

<sup>21</sup> *Ստեփանոս Օրբելյան, էջ 519:*

<sup>22</sup> *Մատ., ձեռ. № 2924, էջ 152ա:*

<sup>23</sup> *Ստեփանոս Օրբելյան, էջ 519:*

<sup>24</sup> *Մատ., ձեռ. № 6271, էջ 339ա:*